

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅՑ ՔՐՕՆԻԿ

Ամեն անգամ, ամեն տարի, երբ աշունքը մօտենում է կամ սկսում, մի, արդէն հնացած, թեմա կրկին սեղանի վերայ է դրում հակական շրջաններում: Դա՝ հակական թատրոնի խնդիրն է, որ թէն չին, բայց երբէք չի ուզում թառամել և, այդ պատճառով, մնում է միշտ նոր:

Հայ հասարակութիւնը չ'ունի թատրոն և ամօթ է, որ նա այն չ'ունենաւ: — ահա՝ հակական թատրոնի խնդրի շուրջը պատաղ բոլոր խօսակցութիւնների ծուծը և բոլոր հառաջանքների միաքը: Բայց սա ևս արժանի է ուշադրութեան, որ այդ խնդրի մասին խօսակցութիւնները չեն դադարում: Այդ ցոյց է տալիս, որ խնդիր կաէ, բայց որ նա զեռ ևս օդի մէջն ըլջում:

Բայց իսկութիւնից չեղաւած կը լինինք, եթէ ասելու լինինք, թէ միմիան խնդիրը կաւ: Ոչ միան այդ կաւ, ալ կան արդէն որոշ կարծիքներ, անգամ ուզգութիւններ, որոնցով զանազան մարդիկ առաջարկում են խնդիրը լուծել: Ահա այդ ուզգութիւններն են, որոնց հետ ևս ուզում եմ խմ ընթերցողներին ծանօթացնել:

Թատրոնական խնդրի մէջ մի որոշ ուզգութիւն լիազէս պատկանում է ալ: Գէորդ Զմշկեանին, որի անունը անխղելի կերպով կապւած է հակական թատրոնի սկզբաւորութեան և պատմութեան հետ, սկսած վաթսունական թականների սկզբից մինչև ամսութակ օրու: Նա, ալ: Գէորդ Զմշկեանը, երբէք չի դադարել թէ բերանացի և թէ գրաւոր կերպով ասել ու քարոզել թէ՝ հակական թատրոնի ապազան տեղական ոչենքի վերայ պէտք է հիմնափ և որ մենք մեր բոլոր ոժենը պէտք է գործ զնենք՝ տեղացիների մէջ ընտրել տաղանդաւորներին և մացնել թատրոնական ասպարէզը: Այդ մտքի հետ զուգահեռապէս, որքան ևս կարողացել եմ նորան հասկանալ, նա քարոզել է միշտ, թէ մեզ հարկաւոր են ոչ ակնքան արտակարգ տաղանդներ, որքան մի ներդաշնակ խումբ, որը իրանից ներկաւացնէր մի լաւ անսամբլ:

Այն տաքութիւնը, որ պ. Զմշկեանը մտցնում է իւր ալդ դատի պաշտամանութեան մէջ, անի իւր առանձին պատճառները. որովհետեւ միքար ինքն ըստ ինքեան շատ պարզ է և, ըստ երեսթին, դատը չի պահանջում մի առանձին ջերմ պաշտպանութիւն։

Բայց ահա՛ հանդամանքը, 1879 թւականից հրաւիրւեցին Թիֆլիս Պօլսի դերասաններ, պ.պ. Աղամեան, Մնակեան և ալիկիններ ու օրիորդներ՝ Գարագաչեաններ, Աստղիկ, Սիրանոց, Հրաչեալ և ալլն. Նոցա Թիֆլիս գալովը հակական բեմը ստացաւ մի դեռ ևս չը տեսնած փակլ որից աչքերը ամենա «կուրացան», որ Թիֆլիսի նոյն խոկ ուռսախօս և հակական բեմը երբէք ոտք չը կոխած հակ ընտանիքները սկսեցին լաճախել հակական ներկալացումները. և գեռ.ոչ միայն հակ ընտանիքները, ալև և օտարազդիներից շատուրը և նոյն խոկ վրացի և ուռս դերասանները և դերասանուհիները։

Մական երկար չը տեսեց ալդ թատրոնական խրախնանքը։ 1881/82 թւականին ալդ խումբը դադարեց գործելուց. — Ինչո՞ւ — Որովհետեւ էլ «Փող չը մնաց» հատարակութեան գրասնումը, որ կարելի վնէր բաւարարութիւն տալ նորեկ դերասանների միշտ աւելի և աւելի աճող պահանջներին։ Ալդ, որպէս և նոցա հետ միասին գործող տեղական դերասանները, ստանում էին ոռճիկներ մի հակական թատրոնական կոմիտետից, որի պարագլուխն էր իշխան Խապօլէօն Ամատունի, խոկ անդամներ պ.պ. Արդար Յովհաննիսեան, Գրիգոր Փրիդոննեան, Մովսէս Թաւաղեան և ուրիշներ ևս, ի հարկէ, չեմ մտնում ալդ մանրամասնութիւնների մէջ, վախենալով որ իւր «Թատրոնական վիշողութիւնների» մէջ պ. Զմշկեանը ինձ ստաս աց չը դուրս բերէ. բայց ալսքանը հաստատ գիտեմ, որ ոռճիկներ դերասանները ստանում էին թատրոնական կոմիտետից, որը իւր անդամների կամ ուրիշ անհատների գրպանից պէտք է վերադիր անէլ՝ գոլացած զեֆիցիտները ծածկելու համար։ Զը նաև ած, որ թատրոնը լիքն էր վնում և հակական թատրոնի անոնը օդն էր թնդացնում, անու ամենալին ալդ թատրոնը, իւր անժամանակեալ դերասաններով, պէտք է զեֆիցիտներ գոլացնէր, չնորհիւ ան բանի, որ ևկովի դերասանները մեզանում անսովոր մնձ ոռճիկներ էին պահանջում։ Որքան ինձ լայտնի է, պ. Աղամեանը, օրինակ, ստանում էր ամսական 400 բուրլի և օգտառում էր մի թէ երկու բնենքիւսով։ Միւսները ստանում էին 200, 250, 150 ր. ամսական։ Դոքա, ի հարկէ, չը լուս ոռճիկներ չեն դերասանների համար առհասարակ. բայց, բացի ան որ ոռճիկներ տալը նորութիւն էր մնալանում, հակական հասարակութեան համար դոքա մեծ փողեր էին. Ախար չէ. որ, ևթէ Թիֆլիսի օպերավին երգիչները ստանում են ամսական մինչև 600—800 բուրլի, ալդ հնարաւոր է միայն չնորհիւ նախ ան մեծ օժանդակութեան, որ տալիս է տերութիւնը, և երկրորդ՝ չնորհիւ ան բանի, որ ալդ օպերաները լաճախողները միմիալն մի ազգի հասարակութիւնից չեն, ալև բուրլ ազգերից՝ ուռսաներ, համեր, վրացիք և ալլն։

Զը նալած դորան, չը նալած, որ հալ հասարակութիւնը զգում էր պօլսական խմբի պահպաննելու ծանրութիւնը, բայց ազգակին բաւականու, թիւնը, այն մըտքը, թէ ահա հակական թատրոնը ստանում է քաղաքացիութիւն, և որ թատրոնից տւած իմաստառով հարախօսութիւնը ոկտոմ է մուտք գործել մինչ այն ժամանակ հակերի համար խուլ ականջներ ունեցող ընտանիքները.—այդ շողոքորթիչ զգացմունքը մի առմանակ մոռացնել տւեց զոհաբերութեան զգացմունքի ծանրութիւնը: Մենք էլ չենք խօսում այն բաղմաթիւ անհատների մասին, որոնց այդ զւարձութիւնը շատ թանկ նստեց, նրանց, որոնք գերասանական շրջաններին առանձնապէս մօտիկ էին:

Բայց այդ զեռ ոչինչ Ասենք, թէ գանգատողները խփապէս չը քանդեցին և նորա չեն հասարակութեան մէջ միակ զեր խաղացողները թատրոնի նկատմամբ: Կար և մի ուրիշ հանգամանք, աւելի ծանրակշխոքն առաջինը, խումբը, որ կազմւած էր պօլսեցիներից և անդացիներից, կարծու թէ բաժանւած էր երկու կուսակցութիւնների՝ պօլսական և անդական, մէկը՝ Ադամեանով, միւսը՝ Զմշկեանով Տեղացիները իրանց ամեն կողմից արհաւմարհւած էին համարում և ոչ ըստ արժանաւոք գնահատուած, Ազսպէս, օրինակ, պ. Զմշկեանը, տիկ. Զմշկեանը, պ. Տէր-Դաւթեանը, պ. Աւալեանը, միասին առած, հազիւ անքան ուժիկ էին ստանում որքան պօլսեցիներից մէկը կամ միւսը առանձին և զեռ աւելի էլ պակաս: Տեղական գերասանները, աղջակատով, իրանց զգում էին վիրաւորւած չնորհիւ, ի միջի ազոց, այն հանգամանքի, որ պօլսեցիք ոչ մի համերաշխութիւն չէին ուղում պահպաննել իրանց և անդացիների մէջ:

Բայց անհամերաշխութեան զգացմունքը շուտով տարածւեց և ամբողջ խմբի վերալ, չնորհիւ այն առանձին զիրքի, որ բանեց պ. Ադամեանը, իւր բոլորովին արտակարգ խաղով: Պարոն Ադամեանը զպլոցի մարդ չէր և ոչ էլ դառաւ զպլոցի մարդ, զպլոցի գերասան: Նա ճանաչում էր միայն և միմիայն իրան, իւր հետ միասին՝ իւր խաղը, իւր դերակատարութիւնը: Ուրիշ ոչ ոքի նա չէր ուղարմ ճանաչել քեմի վերակ. իւր հետ միասին խաղացողները գերաս աններ՝ չը պիտի լինէին, այլ միայն զեր սեր տած մարդ դիկ. բնմի վերաէ ինքը պիտի մնար միակ գերասան: Հասարակութեան բոլոր ուշքն ու միտքը պէտք է զարձրած լինէր զէսի ինքը, Ադամեանը: Հասարակութիւնը պէտք է զար թատրոն ոչ թէ պիեսը լաւ խաղացւած տեսնելու համար, այլ միայն տեսնելու, թէ Ադամեանը ինչպէս է կատարելու իւր ատանձնած գերը: Պ. Ադամեանը, ասում իմ, զպլոցի մարդ չէր. զպլոցի մարդը սավար է ոչ միայն իւր զերը լաւ կատարելու, այլ նա ձգտում է նաև բոլորի գերակատարութեան հետեւ և պահպաննել անսամբլը, ամբողջութիւնը, որպէս զի պիեսը լիակատար կերպով խաղացւի: Ինչ խօսք, որ գերասանը, վերջ ի վերջու, պիեսի հեղինակի կհնդանի թարգմանն է և որ, ուրիմն, պիեսի շահը, պիեսի ողուար,

ամենից առաջ պէտք է ի նկատի առնելու խսկ պիեսի շահը պահանջում է, որ ամենքը իրանց դերերը լաւ խաղան և որ ամենքի խաղերի մէջ պիեսի ներքին կապը պահպանվի. Ազդ կարելի է առաջ ըերեւ միայն խմբի անսամբլը պահպանելով. մի պահանջ, որին պ. Աղամեանը չէր համատում:

Սս չեմ կարող ինքս ստուգել, բայց եթէ դերասաններին լսելու լինք, պ. Աղամեանը, իւր առանձին դիրքը ընմի վերակ պահպանելու համար, նոն խսկ անսանդի շարժմունքներով խանգարում էր ուրիշներին, մասաւանդ, երբ ստցա լաջողուում էր գրաւել հասարակութեան ուշադրութիւնը.

Մի խօսքով, պ. Աղամեանը ներկագանում էր ոչ որպէս խմբի մարդ, ալ իրքն մի վիրատող իւր գործի մէջ. խսկ նորա բանած դիրքը կը սազէր մի հիւրդերասանի, մի գաստրոլերի, որը զալիս է մի քաղաք մի երկու ներկագացումներ առաջ, բայց ոչ թէ մշտապէս խաղալու համար:

Ակաքանը, ինչ վերաբերում է պ. Աղամեանին, բայց նորա հետ նաև միւս պօլսեցիք, որպէս աղջ վկացում են բոլորներեան, կարծես և կել էին թիֆլիս առանսարակի իրանց շնորհքները ցուց տալու, բայց ոչ թատրոնական գործը առաջ մղելու համար:

Ես չը զիտեմ, կաէ արդեօք թիւրքիակի հալերի մէջ, մասնաւորապէս կ. Պօլսում, հազկական ազգաէին թատրոնական գործ, թէ ոչ, բայց մեղանում, մասնաւորապէս թիֆլիսում, ալղափիսի մի գործ կաւ Հազկական ազգապին թատրոնը զեռ ալն չէ, ուր հակերէն լսուով ներկալացումներ են տալիս, ալ ազդ ներկագացումների հետ պէտք է կապւած լինի մի գաղափար, ալն է մեր միւս բոլոր հասարակական գործիշների, Փակտօրների հետ (զարոցի, մամուլի և ալին) միասին նպաստել առաջդիմութեան: Մեղանում ձգտում կաէ թատրոնը զարձնել օրդանական պահանջ հաէ հասարակութեան: Ազդ գործի պատմութիւնը ինձ չի պատկանում անեւ, բայց միան լավանի է, որ ազդ գործը արդէն իւր՝ մօտ 30 տարւաէ պատմութիւնն ունի և որ ազդ պատմութեան հետ կապւած են Պոօշեանի, Կարինեանի, Դաբրիւէ Պատկանեանի, պարան և ամկին Զմշկեանների, Ամերիկեանի, Սունդուկեանցի, բժ. Տէր-Կրիտորեանցի և ուրիշների անունները: Գոքա հանդիսանում են ոչ թէ իրբ զերասաններ և զրոջներ առանսարակ, ալ և իրք գործի չներ, որոնց ամեն մէկի գործունէութիւնը թատրոնական ասպարիզում միւսի հետ կապ ունի:

Արդ, պօլսեցի զերասանները ոչ միան չ'ուղեցին անդացի զերասաններին ճանաչել, ալ նոքա չ'ուղեցին անդամ հաէ թատրոնական անքան փափակած գործը ճանաչել: Նոքա չ'նկան դործ հիմնելու, կամ հիմնեած բանը շարունակ լու, թէկուզ անելի զերազանց ներկալացումների կատարելագործութիւն մացնելու, ուստինի մէջ նոր հոսանք մացնելու, ալ և կան միան ներկալացումներ տալու ալն մաքով, թէ լաւ վարձարութիւն կը տանաւան: Ամեն ոք սկսեց միան իրան ճանաչել, իւր անձը և

իւր գրաբանը. Պօլսական խումբը ազդեց հասարակութեան վերաէ իւր խաղով, բայց ոչ մի բարոլական ազգեցութիւն չը թողնցի թատրոնական գործիչների և զերասանների վերալ, նա չը խրախուսեց սիրել գործը, անձնւիրաբար գործել գաղափարի համար:

Խումբը ցրւեց 1881¹⁸⁸²-ին. հալոց մշտական թատրոնից մնացին միանց վիշտութիւններ, մինչև որ 1885/6-ին մի քանի խոչը դրամատէրերի՝ Փիթօվեանի, Մանթաշեանի և Փրիդոնեանի գրաւականով կազմւեց մի խումբ, մասնակցութեամբ կրկին հրաւիրած և արդէն իւր անունը Ռուսիակամ հոչակած պ. Աղամեանի, ալ և մի պօլսեցի զերասանունու. Երաշխառորները մի տարի հազիւ կարողացան պահպանել ալդ խումբը և, կրելով մի ինչ որ 3000 բուրգու կորուստ, չետ կանգնեցին գործից:

Ալդ թւականից դէսը արդէն անցել են տարիներ. հալոց հասարակութիւնը իրան մի տեսակ որբացած է զգում, առանց մշտական թատրոնի. Պէտք է խոստովանւած, սական, որ նոյն ալդ գանգատաւոր հասարակութիւնը շատ էլ թատրոնական հասարակութիւն չէ. թատրոնը, մանաւանդ դրամատիկականը, նորա կեանքի հացն ու աղը չէ զարձած. բայց և անպէս, նա շատ լաւ է զգում թատրոնի կրթիչ նշանակութիւնը և ան պակասը, որ գոլացել է ազգակին կեանքի մէջ առանց հաղկական թատրոնի. Վրաց թատրոնի մշտական բնաւորութիւն ստանալը աւելի ու աւելի զրդեց հազերին իրանց թատրոնի մասին մոտածելու. Սիրողները փորձեր արին ներկալացումներ տալով ալդ պակասը մի որոշ չափով լրացնել. բայց նոցա ներկալացումները ալճքան սակաւ էին լինում, որ, եթէ բանը նրանց գար, ինդիրը խսպառ կը մոռացէր. Ալդ անդոր ծ տարիներումն է, որ կազմւեց Թիֆլիսում «Հալոց Դրամատիկական ակումբ» կոչւած ընկերութիւնը, որը գոյութիւն ունի միմիան իւր կանոնադրութեան հաստատւած լինելու և երբեմնապէս նիստեր կազմելու ու մի քանի հաղար էլ փող հաւաքած լինելու պատճառով, թէ չէ գործունէութիւն գեռ ևս չի ցոյց տւած. Ալդ ընկերութիւնը ունի ինչ որ մի կոմիտեատ, որին լանձնւած պէտք է լինի հաղկական թատրոնական գործը. զորա նախադանն էր պ. Ասափի Փիթուեանը, որը լավտնի մնկենասն է Թիֆլիսում եղած արևատագէտների, մանաւանդ երաժշտական և թատրոնական տաղանդներին բայց նոյն ալդ մարդը հալոց թատրոնական գործին չը կպաւ և գուցէ ալդ գաղափարը աւելի մնուցներուն նպաստեց, քան վերաբենդանալուն. Դորա դէմ բողոքողը եղաւ, որքան ես վիշտում եմ, նոյն պ. Գէսրդ Զմշկեանը, որը հաղկական թատրոնի գաղափարը կրողներից նշանաւորագոյնն է՝ սկսած տասնեակ տարիներից:

Ալս կարծառու տեսութիւնը ևս արեցի ան նպատակով, որ թատրոնի խնդրի վերաբերեալ երկու տարբեր ուղղութիւնները հասկանալի լինին. Ընթերցողը ծանօթացաւ պօլսական զերասանների խմբի բնաւորութեան հետ. Սրշ, հասարակութեան մնածագոյն մասը սպասում է մեր թատրոնի.

վերականգումը՝ պօլսական զերասանների վերադարձին։ Ում հետ որ խօսեք, զուք այդ կը լսէք։ Դորա հակառակ ուղղութիւն է քարողում պ. Դէորդ Զմշկեանը, որի ասելովը, հաղական թատրոնական գործի զարգացումը կանգնացնել է նշանակում՝ եթէ մեր լուսերը դնենք պօլսեցոց վերակ, թէ-կուզ այդ պօլսեցիք լինեն մի-մի Ադամնան, Մնակնան, Գարագաչեաններ և այն։

Որպէս տեսնում է ընթերցալը, աւանդ կակ մի պրօբլեմ, մի խնդիր, որի լուծելը անքան էլ հեշտ չէ, որովհետեւ, գոնէ աւս րոպէին, առանց պօլսեցիների—թատրոնը կորցնում է իւր դիմեականութիւնը, իսկ նոցա հետ լինելով, կորչում է համերաշխ գործունէութիւնը—«դպրոցի» ուղղութիւնը և վասնգւում, ալսպէս ասած, թատրոնական Փօնդը։ Պրօբլեմը դրւած է, արժէ մտածել դորա վերակ

ԼՈՒՍԻՒՆԻ